ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ՇՀԱՊՁԲ-5/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **30.09.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Վարբադ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Բաղալյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 26.04.2014թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-5/2-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն և «30 կվտ հզորության էլեկտրական (դիզելային շարժիչներ)» և «50 կվտ հզորության էլեկտրական (դիզելային շարժիչներ)» ապրանքատեսակների մատակարարումը նախատեսել մինչև 2014թ. հոկտեմբերի 30-ը: Վճարումը կիրականցվի Պայմանագրով նախատեսված կարգով՝ 2014թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Վարբադ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Արագածի 26շ. Բն. 19
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Պրոմեթեյբանկ» ՍՊԸ
Հ/Հ 90001114[illegible]	Հ/Հ 1660001746550100
ՀՎՀՀ 00[illegible]	ՀՎՀՀ 02253825
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/18–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-5/2» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2014թ-ի ապրիլի 26-ին կնքված N ՇՀԱՊՁԲ-5/2-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի սեպտեմբերի 30-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Չնախատեսված հանգամանքների առաջացման հետևանքով Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն և «30 կվտ հզորության էլեկտրական (դիզելային շարժիչներ)» և «50 կվտ հզորության էլեկտրական (դիզելային շարժիչներ)» ապրանքատեսակների մատակարարումը նախատեսել մինչև 2014թ. հոկտեմբերի 30-ը: Վճարումը կիրականցվի Պայմանագրով նախատեսված կարգով՝ 2014թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 9.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-29-44-99:

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: